Պ-675[14]-09.10.2023-ՊԱ-011/0

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք)~~ 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 14. Ոստիկանության պարտականությունները զենքի շրջանառության նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս**

Ոստիկանությունը պարտավոր է պատշաճ իրականացնել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված լիազորությունները և պարտականությունները:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական ~~հրապարակմանը հաջորդող օրվանից:~~ հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: